13. Ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգում և պահպանում ծրագրով փաստացի կատարողականը կազմել է 3,546,318.1 հազար դրամ՝ նախատեսված 3,636,000.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 97.5%, ինչի շրջանակներում Երևան քաղաքի բոլոր վարչական շրջանների փողոցներում, մայթերում և բակային տարածքներում իրականացվել են շուրջ 750.0 հազար քառակուսի մետր մակերեսով ասֆալտ-բետոնյա ծածկի ընթացիկ նորոգման աշխատանքներ: Իրականացվել են նաև փողոցների ճաքալցման աշխատանքներ:

14. Ասֆալտ-բետոնյա ծածկի հիմնանորոգում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 83,363.2 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 84,000.0 հազար դրամի դիմաց, ինչը պակաս է 2016 թվականի համապատասխան ցուցանիշից 79,999.8 հազար դրամով:

Նշված գումարի շրջանակներում իրականացվել են հողային պաստառով ճանապարհների շուրջ 5,948 հազար քառակուսի մետր ընդհանուր մակերեսով տարածքի հիմնանորոգման աշխատանքներ:

15. Եզրաքարերի վերանորոգում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 29,108.4 հազար դրամ՝ նախատեսված 46,250.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 62.9%, որից 15,296.7 հազար դրամը թվով 5 վարչական շրջաններում եզրաքարերի ընթացիկ նորոգման, իսկ 13,811.7 հազար դրամը Երևան քաղաքի փողոցների հին եզրաքարերի փոխարինման համար՝ ընդհանուր 3,390 գծմ երկարությամբ:

16. Հենապատերի վերանորոգում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 75,744.9 հազար դրամ՝ նախատեսված 92,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 82.3%, որն ավելի է նախորդ տարվա փաստացի ցուցանիշից 24,041.4 հազար դրամով: Ծրագրի շրջանակներում հիմնանորոգվել են մասնագիտական ուսումնասիրության արդյունքում առաջնահերթ և հրատապ հիմնանորոգման ենթակա հենապատերը:

17. Հետիոտն անցումների կառուցում և վերանորոգում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 4,340.4 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 12,000.0 հազար դրամի դիմաց, որի շրջանակներում վերանորոգվել է Արաբկիր վարչական շրջանի Վ. Դավթյանի անվան զբոսայգու գետնանցումը:

18. Կամրջային կառուցվածքների վերականգնում և պահպանում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 89,967.6 հազար դրամ՝ նախատեսված 90,000.0 հազար դրամի դիմաց, որի շրջանակներում ֆինանսավորվել են Երևան քաղաքի թվով 4 կամուրջների, 3 էստակադաների, 2 հետիոտն վերգետնյա անցումների, 15 ուղեանցերի և ուղետարերի պահպանումը:

19. Հրազդանի կիրճի բարեկարգում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 1,979.8 հազար դրամ՝ նախատեսված 2,000.0 հազար դրամի դիմաց, ինչի շրջանակներում իրականացվել են թափվող քարերից տարածքի մաքրման և բարեկարգման աշխատանքներ:

20. Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 43,103.2 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 50,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 86.2%, որի շրջանակներում իրականացվել են շուրջ 5,250 քմ մայրերի սալիկապատման աշխատանքներ:

21. Փողոցների պահպանում և շահագործում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 52,284.2 հազար դրամ՝ նախատեսված 60,000.0 հազար դրամի դիմաց, որի շրջանակներում իրականացվել են Երևան քաղաքի որոշ փողոցների մետաղական ցանկապատերի և միջնապատերի վերանորոգման և ներկման աշխատանքներ:

22. Ավտոկայանատեղի կազմակերպման ծառայություն ծրագրով փաստացի ծախսը կազմել է 444,000.0 հազար դրամ, ինչը Երևան քաղաքում ավտոկայանատեղիների կազմակերպման ծառայությունների մատուցման համար «Փարկինգ Սիթի Սերվիսես ՓԲԸ-ի հետ՝ ամսական 30.0 մլն դրամ հաստատուն գնով (ներառյալ ԱԱՀ) կամ տարեկան 360.0 մլն դրամով, և հավատարմագրային կառավարման ծառայությունների մատուցման համար «Լոկատորես ՓԲԸ-ի հետ՝ ամսական 7.0 մլն դրամ գումարով (ներառյալ ԱԱՀ), կամ տարեկան 84.0 մլն դրամով, երկու նոր պայմանագրերով նախատեսված ծառայությունների մատուցման տարեկան ծախսերի հանրագումարն է:

23. Թեքահարթակների կառուցում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 33,359.0 հազար դրամ՝ նախատեսված 47,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 70.9%, որի շրջանակներում Երևան քաղաքի փողոցների խաչմերուկների մայրերի մուտքերում կառուցվել են թվով 336 թեքահարթակներ, ինչպես նաև 24 հասցեներում տեղադրվել են մայրերի ավարտի մասին զգուշացնող հատուկ գոգավորությամբ դեղին սալահատակներ՝ տեսողության խնդիրներ ունեցող քաղաքացիների համար:

24. Փողոցների, հրապարակների և այգիների կահավորում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 261,762.6 հազար դրամ՝ նախատեսված 274,800.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 95.3%, ինչի շրջանակներում ձեռք է բերվել և տեղադրվել տարբեր տիպի 1500 նստարաններ, 600 աղբաման, փողոցների՝ թվով 4

նորաճ ուղենիշեր, թվով 31 ծառաբների չուգունե ծածկույթ, գովազդային անձնագրավորման նպատակով թվով 60 պատմամշակութային արժեք ունեցող շենքերի համար պատրաստվել և տեղադրվել են համապատասխան ցուցանակներ, ամբողջությամբ կամ մասնակի նորոգվել են համապատասխանաբար թվով 80 և 1600 նստարան ու թվով 160 և 1310 աղբաման:

25. Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագրի իրացման միջոցառումներ ծրագրով փաստացի ծախսը կազմել է 1,815,503.4 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 1,977,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 91.8%՝ Երևան քաղաքի շրջանցիկ ճանապարհի կառուցման ծրագրի իրականացման նպատակով Երևան քաղաքի վարչական սահմաններում բացառիկ գերակա հանրային շահ ճանաչված տարածքներում գտնվող օտարվող սեփականության (հողի) դիմաց փոխհատուցում տրամադրելու համար:

26. Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագրով (պատվիրակված լիազորություններ) փաստացի ծախսը կազմում է 1,201,888.9 հազար դրամ նախատեսված (ճշտված) 1,305,503.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 92.06%:

27. Վերելակների հիմնանորոգում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 101,425.8 հազար դրամ՝ նախատեսված 103,523.3 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 97.7%, որի շրջանակներում թվով 9 վարչական շրջաններում իրականացվել են վերելակների հիմնանորոգման աշխատանքներ:

28. Երևանի մետրոպոլիտենի աշխատանքների կազմակերպում (պատվիրակված լիազորություններ) ծրագրով փաստացի ծախսը կազմել է 2,689,994.7 հազար դրամ՝ նախատեսվածի չափով, ինչն ամբողջությամբ ուղղվել է «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի ընթացիկ ծախսերի սուբսիդավորմանը:

29. Վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրման ծառայություններ ծրագրով փաստացի ծախսը կազմել է 610,933.4 հազար դրամ՝ նախատեսվածի չափով և

հատկացվել է ՀՀ 2017 թվականի պետական բյուջեից որպես սուբվենցիա, ինչն ամբողջությամբ ուղղվել է «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի ընթացիկ ծախսերի սուբսիդավորմանը:

30. Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ, ինչպես նաև Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ դրամաշնորհային ծրագրերով (պատվիրակված լիազորություններ) փաստացի ծախսը կազմել է 410,118.32 հազ. դրամ:

31. Զբոսաշրջության զարգացում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 16,775.9 հազար դրամ՝ նախատեսված 25,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 67.1%: Ծրագրի շրջանակներում մշակվել և տպագրվել է Երևանի միասնական զբոսաշրջային քարտեզ, իրականացվել է «Ես եմ իմ քաղաքի զբոսավարը կրթական կամավորական ծրագիրը, իսկ իրադարձային զբոսաշրջության զարգացման նպատակով տարվա ընթացքում կազմակերպվել և անցկացվել են արդեն ավանդական դարձած «Համով-հոտով Երևան», «Երևան SUՐԱԶՖեստ» և «Երևանի գարեջրի» փառատոնները:

32. Դրոշների տեղադրում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 43,433.9 հազար դրամ՝ նախատեսված 45,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 96.5%, որի շրջանակներում ձեռք են բերվել և փոխվել թվով 6,348 դրոշ Երևան քաղաքի փողոցներում, Երևանի քաղաքապետարանի ենթակայության դպրոցներում, մանկապարտեզներում, երաժշտական և արվեստի դպրոցներում, այլ մշակութային կազմակերպություններում, սպորտ-դպրոցներում և շախմատի դպրոցներում, ինչպես նաև օտարերկյա նախագահների այցերի ընթացքում թվով 700 դրոշակների տեղադրմամբ իրականացվել են դրոշակազարդարման աշխատանքներ:

33. Աջակցություն համայնքային կազմակերպություններին հուղարկավորությունների հետ կապված անվճար ծառայությունների մատուցման և գերեզմանատների պահպանման համար ծրագրով փաստացի ծախսը կազմել է 23,591.0 հազար դրամ՝ նախատեսվածի չափով, ինչը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի հ. 1910-Ն որոշման հ.1 հավելվածի 16-րդ կետը, ուղղվել է

գերեզմանատների վրա անվճար տեղադրվող մետաղական ցուցանակների ձեռք բերմանն ու տեղադրմանը, ինչպես նաև Կոմիտասի անվան պանթեոնի պահպանությանը:

34. Կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 150,856.2 հազար դրամ՝ նախատեսվածի չափով, ինչն ամբողջությամբ ուղղվել է քաղաքապետարանի ծրագրային ապահովում և ցանցային ղեկավարում իրականացնող «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ-ի սուբսիդավորմանը:

35. Աջակցություն համայնքային և ոչ համայնքային կազմակերպությունների ծրագրերին ծրագրով փաստացի ծախսը կազմել է 328,694.6 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 353,222.8 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 93.0%, որի շրջանակներում աջակցություն է ցուցաբերվել թվով 41 կրթական, մշակութային և այլ կազմակերպությունների (ՀՈԱԿ, ՊՈԱԿ, հասարակական կազմակերպություն և այլն):

36. Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր ծրագրով փաստացի մուտքերը համայնքի սեփականություն հանդիսացող գույքի, այդ թվում՝ հողի իրացումից մուտքերի մասով կազմել են 3,602,509.9 հազար դրամ:

37. Տոնական ձևավորում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 40,470.0 հազար դրամ՝ նախատեսված 41,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 99.4%: Ֆինանսական միջոցները հատկացվել են տոնական օրերին Երևան քաղաքը՝ ներառյալ բոլոր վարչական շրջանները պատշաճ ձևավորելու, այդ թվում՝ տոնական դեկորատիվ առարկաներ, լույսեր և այլ զարդարանքներ ձեռք բերելու համար:

38. Հասցեավորման աշխատանքներ ծրագրով փաստացի ծախսը կազմել է 100,000.0 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 100,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 100.0%, որն ամբողջությամբ ուղղվել է Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի մայիսի 6-ի «Անշարժ գույքի հասցեի տրամադրման դիմաց վճար սահմանելու մասին» N 224-Ն որոշման համաձայն հասցեավորման ծառայություններ ձեռք բերմանը:

39. Ներդրումային ծրագրերի իրականացման ծրագրով փաստացի ծախսը կազմել է 110,000.0 հազար դրամ՝ նախատեսված 118,200.0 հազար դրամի դիմաց, որն էլ ամբողջությամբ ուղղվել է «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի սուբսիդավորմանը:

40. Պարտադիր վճարների գանձման ծառայություններ ծրագրով փաստացի ծախսը կազմել է 295,985.2 հազար դրամ՝ նախատեսված 345,925.9 հազար դրամի դիմաց, որից 212,491.8 հազար դրամը վճարվել է թվով 12 վարչական շրջաններում օպերատորների միջոցով աղբահանության վճարների գանձման ծառայությունների համար և 83,493.4 հազար դրամը հատկացվել է համատիրություններին վարչական շրջաններում աղբահանության վճարների գանձման դիմաց:

41. Առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց համար մատչելիության ապահովում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 6,293.8 հազար դրամ՝ նախատեսված 7,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 89.9%, ինչի շրջանակներում 4,949.8 հազար դրամը ծախսվել է թվով 37 ավտոբուսներում ուղևորների՝ ներառյալ տեսողական խնդիրներ ունեցողների համար հասարակական տրանսպորտից օգտվելու մատչելիության և հարմարավետության ապահովման շրջանակում կանգառների ազդարարման ավտոմատ համակարգերի տեղադրմանը, իսկ 1,344.0 հազար դրամն ուղղվել է հաշմանդամներին ավտոկայանատեղիի արտոնության սահմանման գործընթացի իրականացմանը:

42. Աղբահանություն և սանիտարական մաքրում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 5,052,128.7 հազար դրամ՝ նախատեսված 5,128,670.3 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 99.9%, որի շրջանակներում Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում մատուցվել են սանմաքրման (այդ թվում՝ ձյան մաքրման) և աղբահանության ծառայություններ:

43. Աղբամուղերի սպասարկման և շինարարական աղբի տեղափոխման ծառայություններ ծրագրով փաստացի ծախսը կազմել է 352,132.9 հազար դրամ՝ նախատեսվածի չափով կամ ընդհանուր կատարողականը կազմել է 100.0%:

44. «Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի կոշտ թափոնների կառավարման» (պատվիրակված լիազորություններ) ծրագրի փաստացի ծախսը կազմել է 13,275.4 հազար դրամ:

45. Գետերի հունների մաքրում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 38,683.0 հազար դրամ՝ նախատեսվածի չափով կամ ընդհանուր կատարողականը կազմել է 100.0%, որի շրջանակներում մաքրման աշխատանքներ են իրականացվել թվով 5 վարչական շրջաններում:

46. Կանաչ տարածքների հիմնում և պահպանում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 1,659,431.2 հազար դրամ, որից 1,578,261.2 հազար դրամը ուղղվել է Երևան քաղաքի բոլոր վարչական շրջանների կանաչ տարածքների պահպանման աշխատանքներին, 19,670.0 հազար դրամով գարնանային և աշնանային ծառատունկի համար ձեռք են բերվել թվով 16,3 հազար հատ դեկորատիվ ծառեր, 2 հազար թույա և 2,5 հազար դեկորատիվ թփեր: Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող տնկարանի պահպանման ծախսերի համար հատկացվել է 40,000.0 հազար:

47. Ախտահանման և միջատազերծման ծառայություններ (դեռատիզացիա) ծրագրով փաստացի ծախսը կազմել է 39,144.2 հազար դրամ՝ նախատեսված 40,671.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 96.3%, որի շրջանակներում թվով 7 վարչական շրջանների տարբեր հատվածներում (աղբի կոնտեյներների հարակից տարածքներ, մանկապարտեզներ, առանձնակի դեպքերում՝ բազմաբնակարան շենքեր) իրականացվել են դեռատիզացիոն աշխատանքներ:

48. Հասարակական զուգարանների պահպանում և վերանորոգում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 2,414.0 հազար դրամ՝ նախատեսված 2,420.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 99.8%, որի շրջանակներում Շենգավիթ և Կենտրոն վարչական շրջաններում իրականացվել են հասարակական զուգարանների պահպանման և մաքրման աշխատանքներ:

49. Սիզամարգերի ստեղծում և ծաղկապատում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 308,803.5 հազար դրամ՝ նախատեսված 311,500.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 99.1%, որից 24,303.0 հազար դրամը ուղղվել է 436 և

պարարտանյութ, 213.3 կգ թունաքիմիկատի ձեռք բերմանը և սիզամարգերի գեղարվեստական ձևավորմանը, 203,345.0 հազար դրամը ուղղվել է թվով 1,100,000 ծաղկասածիլների, 5,000 գնդաձև ակացիանների, 3,000 կգ խոտի սերմի, թվով 510,000 վարդակակաչի սոխուկների և 79,155.5 հազար դրամը՝ 10,526 խմ բուսահողի ձեռք բերմանը:

50. Թափառող կենդանիների վնասազերծում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 114,622.1 հազար դրամ՝ նախատեսված 115,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 99.7%, որի շրջանակներում ստերիլիզացվել է 3,818 թափառող կենդանի (միավորի գինը էգերի համար 11,500 դրամ, արուններինը՝ 8,800 դրամ), քնեցվել է 250-ը (միավորի գինը 3,900 դրամ), և վնասազերծվել 10,201 կենդանի (միավորի գինը 7,200 դրամ):

51. Ինքնական կառույցների քանդում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 6,044.9 հազար դրամ՝ նախատեսված 20,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 30.2%, որի շրջանակներում 12 վարչական շրջաններում քանդվել են այն ինքնական կառույցները, որոնք հնարավոր չի եղել իրականացնել կառուցապատողների հաշվին:

52. Չորրորդ աստիճանի վթարային շենքերի քանդում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 10,117.3 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 30,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 33.7%, որն ուղղվել է Տիգրան Մեծի պողոտայի թիվ 47 շենքի քանդման աշխատանքներին:

53. Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրին տրամադրվող տեխնիկական աջակցության ծրագրով (պատվիրակված լիազորություններ ծրագրով փաստացի ծախսը կազմել է 12,484.3 հազար դրամ:

54. Արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքներ ծրագրով փաստացի ծախսը կազմել է 2,275,887.8 հազար դրամ՝ նախատեսվածի չափով և հատկացվել է ՀՀ 2017 թվականի պետական բյուջեից որպես

սուբվենցիա, ինչն ամբողջությամբ ուղղվել է «Երքաղույս» ՓԲԸ-ի պահպանման ծախսերին (աշխատավարձ, էլեկտրաէներգիա և ընթացիկ նորոգման աշխատանքներ):

55. Շենքերի գեղարվեստական լուսավորում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 5,417.3 հազար դրամ՝ նախատեսված 9,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 60.2%, որն ամբողջությամբ ուղղվել է Շենգավիթ վարչական շրջանում Գ. Նժդեհի փողոցի և Արշակունյաց պողոտայի խաչմերուկում շենքերի նեոնային լուսավորության կառուցմանը, ինչպես նաև առկա նեոնային ցանցի վերականգնմանը և պահպանմանը:

56. «Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի քաղաքային լուսավորության ծրագիրը դրամաշնորհային ծրագրի» (պատվիրակված լիազորություններ) ծրագրի փաստացի ծախսը կազմել է 73,555.9 հազար դրամ:

57. Շենքերի և շինությունների հետազոտման աշխատանքներ ծրագրով փաստացի ծախսը կազմել է 13,037.6 հազար դրամ՝ նախատեսված 15,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 86.9%, որն ուղղվել է վթարային շենքերի սեյսմիկ հետազոտման և ինքնական կառույցների օրինականացման ընթացքում շինությունների հետազոտման աշխատանքների:

58. Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգում և բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգում ծրագրերով փաստացի ծախսը կազմել է 260,282.9 հազար դրամ՝ նախատեսված 371,165.8 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 70.1%, որի սահմաններում մայրաքաղաքի վարչական շրջաններում (բացառությամբ Նորք-Մարաշ վարչական շրջանի) մասնակի կամ ամբողջական վերանորոգվել են 1103 բազմաբնակարան շենքերի շուրջ 95,000 քմ հարթ տանիքներ, ինչպես նաև 1,223 շենքերի շուրջ 45,000 քմ թեք տանիքներ և հիմնանորոգվել են թվով 10 թեք տանիքներ 5 վարչական շրջաններում:

59. Բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգում և պահպանում ծրագրերով փաստացի ծախսը կազմել է 786,316.2 հազար դրամ՝ նախատեսված 1,157,479.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը

կազմել է 67.9%, որից 41,071.8 հազար դրամով ձեռք են բերվել բակային տարածքների բարեկարգման և նորոգման համար նյութեր, 153,187.9 հազար դրամի շրջանակներում համատիրությունների միջոցով իրականացվել են բակային տարածքների պահպանման ընթացիկ աշխատանքներ, ինչպես նաև 576,888.5 հազար դրամը ուղղվել է բակերի կառուցմանը և հիմնանորոգմանը, կառուցվել են 6 մինի ֆուտբոլի դաշտեր, իսկ 15,168.1 հազար դրամով բակային տարածքներում տեղադրվել են նստարաններ և զրուցարաններ: Ընդհանուր նորոգման և բարեկարգման աշխատանքներ են իրականացվել մայրաքաղաքի 256 բակերում:

60. Բազմաբնակարան շենքերի բարեկարգման այլ աշխատանքներ ծրագրով փաստացի ծախսը կազմել է 451,691.7 հազար դրամ՝ նախատեսված 605,250.7 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 74.6%, որից 448,195.7 հազար դրամով վերանորոգվել կամ մասնակի նորոգվել է 694 բազմաբնակարան շենքերի թվով 1,141 շքամուտքեր, որոնց աշխատանքների կազմակերպման արդյունավետությունն ապահովելու նպատակով կիրառվել են տարբեր մոտեցումներ՝ աշխատանքների իրականացման ուղղակի պատվերի կամ անհրաժեշտ նյութերով համատիրություններին ապահովելու եղանակով, իսկ 3,495.9 հազար դրամով իրականացվել են Ֆուչիկի փողոցի 23 երրորդ աստիճանի վթարային շենքի ամրացման և վերանորոգման աշխատանքները:

61. Ջրային կառույցների շահագործում և պահպանում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 363,955.4 հազար դրամ՝ նախատեսվածի չափով, որն ուղղվել է թվով 30 ջրային կառույցների պահպանմանը:

62. Կաթսայատների պահպանում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 26,033.1 հազար դրամ՝ նախատեսվածի չափով՝ նախորդ տարվա համապատասխան ցուցանիշի չափով, որն ամբողջությամբ ուղղվել է Երևանի սեփականություն հանդիսացող կաթսայատների պահպանմանը:

63. Կամարանցումների և այլ շինությունների վերանորոգում և գունազարդում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 26,035.1 հազար դրամ՝ նախատեսված 35,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 74.4%, որի շրջանակներում վերանորոգվել է թվով 54 և գունազարդվել է թվով 56 կամարանցում,

վերանորոգվել և հատուկ նյութերով երեսպատվել են թվով 907մետաղյա հենասյուն, ինչպես նաև իրականացվել է Իսակովի պողոտա 40 շենք հասցեում գտնվող շենքի ֆասադի գունազարդումը:

64. Վթարային պատշգամբների նորոգում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 29,878.7 հազար դրամ՝ նախատեսված 53,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 56.4%, որի սահմաններում հիմնանորոգվել են 69 շենքի թվով 166 վթարային պատշգամբ:

65. Կոյուղագծերի կառուցում և վերանորոգում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 3,241.6 հազար դրամ՝ նախատեսված 4,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 81.0%, որի շրջանակներում ամբողջովին ավարտվել են Արաբկիր վարչական շրջանի թվով 4 հասցեներում կոյուղատար ցանցի արդիականացման աշխատանքները:

66. Առողջապահական կազմակերպությունների համար բժշկական սարքավորումների ձեռք բերում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 87,602.8 հազար դրամ՝ նախատեսված(ճշտված) 99,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 88.5%: Փաստացի ցուցանիշի նկատմամբ շեղումը պայմանավորված է գնումների գործընթացում առաջացած խնայողություններով: Ծրագրի սահմաններում ձեռք է բերվել և տրամադրվել Երևանի ենթակայության առողջապահական կազմակերպություններին 26 բժշկական սարքավորում և 54 բժշկական գույք:

67. Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 111,036.7 հազար դրամ՝ նախատեսված 194,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 57.2%, որի շրջանակում թվով 7 պոլիկլինիկաներում իրականացվել են պատուհանների փոխարինման աշխատանքներ:

68. Դժվարամատչելի հետազոտությունների իրականացում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 11,587.1 հազար դրամ՝ նախատեսված 12,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 96.6%, որի սահմաններում թվով 240

սոցիալապես անապահով երևանցիներ անվճար անցել են դժվարամատչելի բուժօգնություն:

69. Աջակցություն առողջապահական կազմակերպություններին ծրագրով փաստացի ծախսը կազմել է 38,766.8 հազար դրամ՝ նախատեսված 40,000.0 հազար դրամի դիմաց, որն ուղղվել է Երևանի ենթակայության հիմնանորոգված առողջապահական կազմակերպությունների համար անհրաժեշտ գույքի ձեռքբերմանը:

70. Սպորտային միջոցառումների կազմակերպում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 106,763.8 հազար դրամ՝ նախատեսված 109,569.7 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 97.4%, որի շրջանակներում Երևան քաղաքում 2017 թվականին իրականացվել են մի շարք սպորտային միջոցառումներ:

71. Հանգստի գոտիների և զբոսայգիների կառուցում ու պահպանում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 335,057.1 հազար դրամ՝ նախատեսված(ճշտված) 368,300.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 90.1%, որից 40,000.0 հազար դրամը ուղղվել է Սիրահարների զբոսայգու պահպանմանը, 200,000.0 հազար դրամը ուղղվել է Ստեփանակերտի այգու կառուցմանը: Ծրագրի շրջանակներում 95,057.1 հազար դրամն ուղղվել է Կենտրոն վարչական շրջանում Կարապի լճի հարակից տարածքի բարեկարգմանը, ինչպես նաև Նոր Նորք վարչական շրջանում Գալշոյան 12 շենքի և Գյուլիքեխյան 29 շենքի հարակից տարածքներում հանգստի գոտիների կառուցմանը:

72. Հեծանվահրապարակի շահագործում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 61,894.0 հազար դրամ՝ նախատեսված 62,000.0 հազար դրամի դիմաց:

73. Գրադարանային ծառայություններ ծրագրով փաստացի ծախսը կազմել է 454,671.5 հազար դրամ՝ նախատեսված 454,671.8 հազար դրամի դիմաց, որն ուղղվել է Երևանի համայնքային 19 գրադարանային կազմակերպությունների սուբսիդավորմանը:

74. Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ ծրագրով փաստացի ծախսը կազմել է 252,154.2 հազար դրամ՝ նախատեսված 252,753.5 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 99.9% և հատկացվել է ՀՀ 2017 թվականի պետական բյուջեից որպես սուբվենցիա՝ թվով 4 թանգարանների պահպանման համար 243,302.4 հազար դրամ, իսկ 8,851.8 հազար դրամը հատկացվել է Երևան քաղաքի 2017

թվականի բյուջեից «Երևանի Ֆրիտոյֆ Նանսենի թանգարան» ՀՈԱԿ-ի պահպանման համար:

75. Համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 109,959.1 հազար դրամ՝ նախատեսված 110,915.8 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 99.1%՝ թվով 5 մշակույթի կենտրոնների պահպանման համար:

76. Մշակութային միջոցառումների իրականացում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 712,234.0 հազար դրամ՝ նախատեսված 730,805.7 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 97.5%, ինչը ներառում է Երևանի քաղաքապետարանի և 12 վարչական շրջանների՝ առանձին-առանձին կազմակերպված մշակութային միջոցառումները, որոնցից հիմնականներն են Ամանորի միջոցառումները, Էրեբունի-Երևան տոնակատարությունը, մարտի 8-ի և ապրիլի 7-ի միջոցառումները, Անկախության օրվան նվիրված միջոցառումները, «Գարուն-Երևան» և «Երևանյան ամառ» միջոցառումները, թատրոնի միջազգային օրվան և ջազի միջազգային օրվան նվիրված միջոցառումները, Արամ Խաչատրյանի երաժշտական փառատոնը և այլն: Երևան քաղաքում 2017 թվականին իրականացվել շուրջ 125 մշակութային և մարզական միջոցառումներ:

77. Կենդանաբանական այգու ցուցադրություններ ծրագրով փաստացի ծախսը կազմել է 252,007.7 հազար դրամ՝ նախատեսվածի չափով և հատկացվել է ՀՀ 2017 թվականի պետական բյուջեից որպես սուբվենցիա՝ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի պահպանման ծախսերի համար:

78. Կենդանաբանական այգու հիմնանորոգում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 831,768.8 հազար դրամ՝ նախատեսված(ճշտված) 833,015.5 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 99.9%, որի շրջանակներում աշխատանքներ են տարվել առյուծների, արջերի և գայլերի ազատավանդակների, ինչպես նաև նոր կարանտինի կառուցման ուղղությամբ:

79. Երաժշտարվեստի և պարարվեստի համերգներ ծրագրով փաստացի ծախսը կազմել է 112,151.3 հազար դրամ՝ նախատեսվածի չափով՝ որն ուղղվել է թվով 5 կազմակերպությունների պահպանմանը:

80. Թատերական ներկայացումներ ծրագրով փաստացի ծախսը կազմել է 363,250.1 հազար դրամ՝ նախատեսվածի չափով և հատկացվել է ՀՀ 2017 թվականի պետական բյուջեից որպես սուբվենցիա՝ թվով 3 թատրոնների պահպանման համար:

81. Հուշարձանների վերանորոգում և պահպանում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 8,800.0 հազար դրամ՝ նախատեսված 14,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 63.0%, որի շրջանակներում իրականացվել են Երևան քաղաքի հուշարձանների լվացման և այն հուշարձանների նորոգման և պահպանման աշխատանքները, որոնք ընդգրկված չեն պետական պահպանության ենթակա հուշարձանների ցանկում:

82. Քաղաքապետարանի աշխատանքների լուսաբանում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 47,440.0 հազար դրամ՝ նախատեսվածի չափով, որի շրջանակներում գնումների օրենսդրությամբ սահմանված կարգով ընտրվել են հեռուստաընկերություններ, որոնք հաշվետու տարվա ընթացքում լուսաբանել են Երևանի քաղաքապետարանի աշխատանքները:

83. Անդամակցության վճարներ ծրագրով փաստացի ծախսը կազմել է 30,038.8 հազար դրամ՝ նախատեսված 31,325.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 96.0%, որն իր մեջ ներառում է Ֆրանսախոս քաղաքների քաղաքապետերի միջազգային ասոցիացիային, Եվրոպական քաղաքների ասոցիացիային (EUROCITIES), Միջազգային քաղաքային համայնքների լուսավորում ասոցիացիային (LUCI), Համաշխարհային ժառանգության քաղաքների կազմակերպությանը, Մայրաքաղաքների և խոշոր քաղաքների միջազգային ասամբլեային, Տեղական իշխանությունները հանուն կայունության ասոցիացիային, «Եվրոպայի սպորտի մայրաքաղաք 2019» տիտղոսի համար թեկնածությանը, Հայաստանի ավագանիների ասոցիացիային և Հայաստանի համայնքների միությանը հատկացվող գումարները:

84. Նախադպրոցական ուսուցում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 7,573,812.4 հազար դրամ՝ նախատեսված 7,714,614.8 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 98,2%, որի շրջանակներում փաստացի հաճախող երեխաթվի սկզբունքով ֆինանսավորվել է 160 մանկապարտեզ: 1 երեխային ամսական ուսուցման (պահպանման) ծախսերի միջին ինքնարժեքը հաշվարկվել է 22.5 հազար դրամի չափով, ինչպես նաև յուրաքանչյուր մանկապարտեզի պահպանման ծախսերի համար ամսական հատկացվել է 650,0 հազար դրամ:

85. Նախադպրոցական ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ գույքի ձեռքբերում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 205,419.7 հազար դրամ, որի շրջանակներում ձեռք է բերվել և Երևան քաղաքի մանկապարտեզներին բաշխվել է 12,340 նոր գույք:

86. Նախադպրոցական կրթություն (պատվիրակված լիազորություններ) ծրագրով փաստացի ծախսը կազմել է 8,634.7 հազար դրամ՝ նախատեսվածի չափով, որի շրջանակներում՝ որպես պատվիրակված լիազորություն, օրենսդրությամբ սահմանված ընթացակարգով ֆինանսավորվել է «Երևանի հ.175 դպրոց» ՊՈԱԿ-ը:

87. Հանրակրթական ուսուցում, հատուկ կրթություն, ներառական կրթություն և երեկոյան ուսուցում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 16,167,958.7 հազար դրամ՝ նախատեսվածի չափով, որի շրջանակներում՝ որպես պատվիրակված լիազորություն, օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերով ֆինանսավորվել են Երևանի քաղաքապետարանի կողմից համակարգվող թվով 155 դպրոցները:

88. Արտադպրոցական դաստիարակություն ծրագրով փաստացի ծախսը կազմել է 2,672,815.7 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 2,682,506.6 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 99.7%, որից՝ որպես ՀՀ 2017 թվականի պետական բյուջեից հատկացված սուբվենցիա 56,912.6 հազար դրամով ֆինանսավորվել են Երևանի թվով 2 սպորտ-դպրոցներ, իսկ 2,615,903.1 հազար դրամը ուղղվել է թվով 74 երաժշտական, արվեստի դպրոցների, մարզադպրոցների, շախմատի դպրոցների և մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնների ֆինանսավորմանը:

89. Արտադարձական կազմակերպությունների հիմնանորոգում և վերանորոգում

ծրագրով փաստացի ծախսը կազմել է 510,136.6 հազար դրամ՝ նախատեսված(ճշտված) 565,061.5 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 90.3%, որից 291,713.6 հազար դրամն ուղղվել է ՄԱԿ-ի հետ համատեղ ծրագրի իրականացմանը՝ Էրեբունի վարչական շրջանի հ. 3 մանկապատանեկան կենտրոնում էներգաարդյունավետություն ապահովող համակարգերի տեղդրմանը, և 218,422.9 հազար դրամն ուղղվել է Երևանի Նորք-Մարաշի մանկապատանեկան համալիր մարզադպրոցի հարակից տարածքի, Շենգավիթ վարչական շրջանում 1 ստեղծագործական և Աջափնյակ վարչական շրջանում 1 երաժշտական դպրոցների հիմնանորոգմանն ու վերանորոգմանը:

90. «Հակոբ Կոջոյան» կրթահամալիր ՊՈԱԿ-ում արտադարձական դաստիարակության կազմակերպում ծրագրով (պատվիրակված լիազորություններ)

փաստացի ծախսը կազմել է 7,980.2 հազար դրամ՝ նախատեսվածի չափով և հատկացվել է ՀՀ 2017 թվականի պետական բյուջեից որպես պատվիրակված լիազորություն՝ հաշվի առնելով կրթահամալիրի առաձնահատկությունները:

91. Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցում

ծրագրով փաստացի ծախսը կազմել է 162,709.0 հազար դրամ՝ նախատեսվածի չափով և հատկացվել է ՀՀ 2017 թվականի պետական բյուջեից որպես սուբվենցիա, որն ուղղվել է Երևան քաղաքի թվով 26 երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների դասարաններում սովորող թվով 610 աշակերտների ուսման վարձավճարների փոխհատուցմանը:

92. Արտադարձական կազմակերպությունների համար անհրաժեշտ գույքի ձեռք բերում

ծրագրով փաստացի ծախսը կազմել է 92,815.9 հազար դրամ՝ նախատեսված 90,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 103.1%, որի շրջանակներում երաժշտական դպրոցներին տրամադրվել է թվով 174 երաժշտական գործիք, ինչպես նաև Երևան քաղաքի մշակութային օջախների և մարզադպրոցների համար ձեռք է բերվել համակարգչային սարքավորումներ և մարզագույք:

93. Նախադարձական հաստատությունների հիմնանորոգում և վերանորոգում

ծրագրով փաստացի ծախսը կազմել է 646,064.2 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված)

756,500.3 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 85.4%, որի շրջանակներում հիմնանորոգման աշխատանքներ են կատարվել թվով 4 և նորոգման աշխատանքներ են կատարվել թվով 23 մանկապարտեզներում:

94. Դպրոցական օլիմպիադաների և այլ միջոցառումների կազմակերպում ծրագրով փաստացի ծախսը կազմել 16,667.0 հազար դրամ՝ նախատեսվածի չափով, որի շրջանակներում իրականացվել է նաև 26-րդ մարզական խաղերի կազմակերպում, մանկավարժների խրախուսում, «Ազգային Ժողովի գավաթի» կազմակերպում, առարկայական օլիմպիադաներ, շախմատի օլիմպիադա, հոբեյանական և այլ միջոցառումներ:

95. Սոցիալապես անապահով աշակերտներին անվճար դասագրքերով ապահովում (պատվիրակված լիազորություններ) ծրագրով փաստացի ծախսը կազմել է 716.3 հազար դրամ՝ նախատեսվածի չափով, ՀՀ 2017 թվականի պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին: Դպրոցներում սովորող սոցիալապես անապահով 4,866 աշակերտ ապահովվել է անվճար դասագրքերով:

96. Ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչներին հավելավճարների տրամադրում (պատվիրակված լիազորություններ) ծրագրով փաստացի ծախսը կազմել է 24,943.8 հազար դրամ՝ որպես պետության կողմից պատվիրակված լիազորություն:

97. Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների հանգստի կազմակերպում ծրագրով փաստացի ծախսը կազմել 5,904.3 հազար դրամ՝ նախատեսված 6,507.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 90,7%, որը հիմնականում ներառում է թվով 1,215 երեխաների՝ ամառային ճամբարներ տեղափոխման և ճանապարհի սննդի ապահովման ծախսերը:

98. Հարազատ չունեցող անձանց և սոցիալապես անապահով ընտանիքների համար հուղարկավորության կազմակերպում ծրագրով փաստացի ծախսը կազմել 24,286.5 հազար դրամ՝ նախատեսված 29,973.5 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 81.0%:

99. Սոցիալապես անապահով ընտանիքներին տոնական և հիշատակի օրերին աջակցություն, սոցիալապես անապահով անձանց աջակցություն ծրագրերով փաստացի ծախսը կազմել է 598,466.3 հազար դրամ՝ նախատեսված(ճշտված) 651,532.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 91.8%, որի շրջանակներում ֆինանսական աջակցություն է ցուցաբերվել 2017 թվականի ընթացքում Երևանի քաղաքապետարան դիմած սոցիալական խոցելի խմբերին դասվող անձանց, ինչպես նաև կազմակերպվել են բարեգործական ճաշարաններ, մատուցվել են բաղնիքի ծառայություններ, տոնական և հիշատակի օրերին աջակցություն է ցուցաբերվել բնակչության համապատասխան խմբերին և այլն:

100. Հասարակական կազմակերպությունների աջակցություն ծրագրով փաստացի ծախսը կազմել է 35,044.0 հազար դրամ՝ նախատեսված(ճշտված) 43,700.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 80.2%, որի շրջանակներում աջակցություն է տրամադրվել թվով 21 հասարակական կազմակերպությունների:

101. Սոցիալական օգնության ծառայությունների գործունեության կազմակերպում (պատվիրակված լիազորություններ) ծրագրով փաստացի ծախսը կազմել է 360,843.2 հազար դրամ՝ նախատեսված 365,216.9 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 98.8%: Բոլոր ծախսերը իրականացվել են ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 9-ի N 98-Ն որոշմամբ սահմանված կարգով:

102. Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում (պատվիրակված լիազորություններ) ծրագրով փաստացի կատարողականը կազմել է 632,628.9 հազար դրամ՝ նախատեսված 692,496.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 91.4%, որի սահմաններում կրթական ոլորտի պետական ոչ առևտրային կազմակերպությունների և «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի թվով 9,618 աշխատողներ ապահովվել են սոցիալական փաթեթով:

103. Առողջության ապահովագրություն ծրագրով փաստացի ծախսը կազմել է 136,598.4 հազար դրամ՝ նախատեսված 160,784.0 հազար դրամի դիմաց, որի շրջանակներում առողջապահական ապահովագրություն են ստացել թվով 2,976 մարդ, այդ թվում՝

Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների աշխատակազմերի աշխատակիցները, «Երևանտրանս» ՓԲԸ վարորդները, «ԳՇՊՇ» ՓԲԸ սպասարկող անձնակազմը, ինչպես նաև Երևանի ենթակայության գրադարանների, թատրոնների և թանգարանների աշխատակիցները:

Հաշվետու ժամանակահատվածում Երևան քաղաքի 2017 թվականի բյուջեով նախատեսված վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացվել է 8,905,375.2 հազար դրամ Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագրերին (պատվիրակված լիազորություններ)՝ Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի հ. 637-Ն որոշմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում Երևան քաղաքի 2017 թվականի բյուջեն կատարվել է 1,488,882.8 հազար դրամ հավելուրդով նախատեսված (ճշտված) 910,210.3 հազար դրամ պակասուրդի դիմաց:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ